



Զահրատ

Պարոնեան

Անոնք որոնք կը բազկաթոռաբազմին
Անոնք որոնք կը բարեհամբաւածախեն
Անոնք որոնք կը բարեհամբաւագնեն
Անոնք որոնք կը լորձնաշրթնածափահարեն
Անոնք որոնք կ'ապշափառարանեն ու կ'ապշափառաբանոին
Անոնք որոնք կ'ամենագիտանան դրամախելացօրէն
Անոնք որոնք պէտք-չէ-ըլլան-այնպէս-ինչպէս-որ-են
Անոնք որոնք կը մեծխօսին
Անոնք որոնք կը դրամադիզեն
Անոնք որոնք կը պնակալիզեն
Անոնք որոնք կը վաշխառագործեն շահախղճաբար
Անոնք որոնք կը համալարախազան միաշուտն
Անոնք որոնք կը պարծենամուրան
Անոնք որոնք կը մեծոչնչանան
Անոնք որոնք կը նախանձաշարժեն անոնք-որ-իրենց-պէս-չեն
Անոնք որոնք կը տիրացուատեն
Անոնք որոնք կը մեծաբարերարանան թերթասիւնակօրէն
կը նային հայելիիդ մէջ
կը մեռնին խնդալէն